Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-625[1]-23.05.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248-Ն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 390-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանված կանոններով» բառերից հետո լրացնել «՝բացառությամբ վճռաբեկ դատարանում բողոքի քննության գրավոր ընթացակարգով սահմանված կարգի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 413-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ մաս.
«4. Վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու դեպքում բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնել այն մինչև բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտի հրապարակման օրը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 414.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.
«Դատավարության մասնակիցն իրավունք ունի ներկայացնելու վճռաբեկ բողոքի պատասխան վճռաբեկ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը:»

Հոդված 4. Օրենսգրքում լրացնել նոր՝ 415.1-րդ հոդված.

«Հոդված 415.1. Վճռաբեկ դատարանում բողոքի քննության կարգը և ժամկետը

1. Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ ներկայացված եւ վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները քննում եւ դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վճռաբեկ դատարանը եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

2. Վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու մասին կայացվում է որոշում:

3. Վճռաբեկ դատարանում բողոքը քննվում է ողջամիտ ժամկետում:»:

Հոդված 5. Օրենսգրքի 417-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 6. Օրենսգրքի 418-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 418. Վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում

1. Վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում բողոք բերած անձը եւ դատավարության մյուս մասնակիցները ծանուցվում են դատական

նիստի ժամանակի եւ վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար:

2. Բողոքի քննությունը դատական նիստում սկսվում է վճռաբեկ դատարանի պալատի դատավորի զեկուցումով: Զեկուցողը ներկայացնում է գործի հանգամանքները, դատավճռի կամ որոշման բովանդակությունը, վճռաբեկ բողոքի եւ վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները:

3. Վճռաբեկ դատարանի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին եւ նիստին ներկայացած դատավարության մասնակիցներին, որից հետո բողոքի քննությունը հայտարարվում է ավարտված:»:

Հոդված 7. Օրենսգրքում լրացնել նոր՝ 418.1-րդ հոդված.

«Հոդված 418.1. Վճռաբեկ դատարանում բողոքի քննության գրավոր ընթացակարգը

1. Վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու:

2. Վճռաբեկ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում դատավարության մասնակիցները տեղեկացվում են միայն բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտի կայացման օրվա մասին:

3. Գրավոր ընթացակարգով վճռաբեկ բողոքի քննության ընթացքում զեկուցող դատավորը կազմում է վճռաբեկ դատարանի որոշման նախագիծը, որը գործի նյութերի հետ տրամադրվում է վճռաբեկ դատարանի մյուս դատավորներին:

4. Վճռաբեկ դատարանի դատավորները կարող են որոշման նախագծի վերաբերյալ ներկայացնել դիտողություններ եւ առաջարկություններ, որոնց հիման վրա զեկուցող դատավորը կարող է լրամշակել որոշման նախագիծը:

5. Վճռաբեկ դատարանի որոշման նախագծի վերաբերյալ վճռաբեկ դատարանի դատավորների կողմից դիտողություններ եւ առաջարկություններ չներկայացվելու կամ դրանց հիման վրա նախագիծը լրամշակվելուց հետո կամ ներկայացված դիտողությունները եւ առաջարկությունները չընդունվելու դեպքում զեկուցողն այն ներկայացնում է քվեարկության:

6. Եթե քվեարկության արդյունքով զեկուցողի ներկայացրած նախագիծը չի ընդունվում, ապա տվյալ գործով որոշման նոր նախագիծը կազմում է դեմ քվեարկած դատավորների կազմից եւ նրանց կողմից որոշված դատավորը:»:

Հոդված 8. Օրենսգրքի 423-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 423. Վճռաբեկ դատարանի որոշման հրապարակումը եւ օրինական ուժի մեջ մտնելը

1. Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

2. Դատական նիստում վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է եւ բողոքարկման ենթակա չէ:

3. Գրավոր ընթացակարգով վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 414[1] հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ 414[3] հոդվածով նախատեսված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, վերջնական են եւ բողոքարկման ենթակա չեն:»:

Հոդված 9. Օրենսգրքի 424-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 424. Վճռաբեկ դատարանի որոշումը դատավարության մասնակիցներին եւ համապատասխան դատարան ուղարկելը

1. Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումն ուղարկվում է դատավարության մասնակիցներին եւ համապատասխան դատարանին ողջամիտ ժամկետում:»:

Հոդված 10. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաև մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված վճռաբեկ բողոքների քննության վրա, որոնք քննվում են սույն օրենքով նախատեսված գրավոր ընթացակարգով, եթե վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում չի կայացվել:

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

ՆԱԽԱԳԻԾ

Կ-625[1]-23.05.2020-ՊԻ-011/1~~0~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248-Ն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 390-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանված կանոններով» բառերից հետո լրացնել «՝բացառությամբ վճռաբեկ դատարանում բողոքի քննության գրավոր ընթացակարգով սահմանված կարգի~~ի~~» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 413-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ մաս ~~հետևյալ բովանդակությամբ~~.
«4. Վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու դեպքում բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնել այն մինչև բողոքիկ բողոքի քննությունը գրավոր ընթաց-դատական ակտի հրապարակման օրը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 414.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.
«Դատավարության մասնակիցն իրավունք ունի ներկայացնելու վճռաբեկ բողոքի պատասխան վճռաբեկ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը:»

Հոդված ~~2~~4. Օրենսգրքում~~իրքը~~ լրացնել նոր՝ 415.1-րդ հոդված~~ով~~.

«Հոդված 415.1. Վճռաբեկ դատարանում բողոքի քննության կարգը և ժամկետը

1. Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ ներկայացված եւ վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները քննում եւ դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վճռաբեկ դատարանը եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

2. Վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու մասին կայացվում է որոշում:

3. Վճռաբեկ դատարանում բողոքը քննվում է ողջամիտ ժամկետում:»:

Հոդված ~~3~~5. Օրենսգրքի 417-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված ~~4~~6. Օրենսգրքի 418-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 418. Վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում

1. Վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում բողոք բերած անձը եւ դատավարության մյուս մասնակիցները ծանուցվում են դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար:

2. Բողոքի քննությունը դատական նիստում սկսվում է վճռաբեկ դատարանի պալատի դատավորի զեկուցումով: Զեկուցողը ներկայացնում է գործի հանգամանքները, դատավճռի կամ որոշման բովանդակությունը, վճռաբեկ բողոքի եւ վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները:

3. Վճռաբեկ դատարանի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին եւ նիստին ներկայացած դատավարության մասնակիցներին, որից հետո բողոքի քննությունը հայտարարվում է ավարտված:»:

Հոդված 7~~5~~. Օրենսգրքում~~իրքը~~ լրացնել նոր՝ 418.1-րդ հոդված~~ով~~.

«Հոդված 418.1. Վճռաբեկ դատարանում բողոքի քննության գրավոր ընթացակարգը

1. Վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու:

2. Վճռաբեկ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում դատավարության մասնակիցները տեղեկացվում են միայն բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտի կայացման օրվա մասին:

3. Գրավոր ընթացակարգով վճռաբեկ բողոքի քննության ընթացքում զեկուցող դատավորը կազմում է վճռաբեկ դատարանի որոշման նախագիծը, որը գործի նյութերի հետ տրամադրվում է վճռաբեկ դատարանի մյուս դատավորներին:

4. Վճռաբեկ դատարանի դատավորները կարող են որոշման նախագծի վերաբերյալ ներկայացնել դիտողություններ եւ առաջարկություններ, որոնց հիման վրա զեկուցող դատավորը կարող է լրամշակել որոշման նախագիծը:

5. Վճռաբեկ դատարանի որոշման նախագծի վերաբերյալ վճռաբեկ դատարանի դատավորների կողմից դիտողություններ եւ առաջարկություններ չներկայացվելու կամ դրանց հիման վրա նախագիծը լրամշակվելուց հետո կամ ներկայացված դիտողությունները եւ առաջարկությունները չընդունվելու դեպքում զեկուցողն այն ներկայացնում է քվեարկության:

6. Եթե քվեարկության արդյունքով զեկուցողի ներկայացրած նախագիծը չի ընդունվում, ապա տվյալ գործով որոշման նոր նախագիծը կազմում է դեմ քվեարկած դատավորների կազմից եւ նրանց կողմից որոշված դատավորը:»:

Հոդված 8~~6~~. Օրենսգրքի 423-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 423. Վճռաբեկ դատարանի որոշման հրապարակումը եւ օրինական ուժի մեջ մտնելը

1. Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով~~ում~~:

2. Դատական նիստում վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է եւ բողոքարկման ենթակա չէ:

3. Գրավոր ընթացակարգով վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 414~~.1~~[1] հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ 414[3]~~.3-րդ~~ հոդվածով նախատեսված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, վերջնական են եւ բողոքարկման ենթակա չեն:»:

Հոդված ~~7~~9. Օրենսգրքի 424-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 424. Վճռաբեկ դատարանի որոշումը դատավարության մասնակիցներին եւ համապատասխան դատարան ուղարկելը

1. Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումն ուղարկվում է դատավարության մասնակիցներին եւ համապատասխան դատարանին ողջամիտ ժամկետում:»:

Հոդված 10~~8~~. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաև մ~~Ս~~ինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված վճռաբեկ բողոքների քննության վրա, որոնք քննվում են սույն օրենքով նախատեսված գրավոր ընթացակարգով, եթե վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում չի կայացվել:

~~ներկայացված վճռաբեկ բողոքները վարույթ ընդունվելու դեպքում քննվում են գրավոր ընթացակարգով, եթե վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում չի կայացվել:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-625-23.05.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ 1) 1-ին հոդված	Նախագիծ 1-ի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «2013 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-139-Ն» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագիծ 1-ի առաջարկվող խմբագրության 4-րդ հոդված	Նախագիծ 1-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ հոդված. «Հոդված 4. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասում «մինչև գործի դատաքննության ավարտը» բառերից հետո լրացնել «կամ վճռաբեկ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու դեպքում մինչև մինչև բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտի հրապարակման օրը» բառերը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	Կառավարություն	Նախագիծ 1-ի առաջարկվող խմբագրության 5-րդ հոդված	Նախագիծ 1-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ հոդված. «*Հոդված 5.* Օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Դատավարության մասնակիցն իրավունք ունի ներկայացնելու վճռաբեկ բողոքի պատասխան վճռաբեկ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը:»:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագիծ 1-ի առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 5-րդ հոդված	Նախագիծ 1-ի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 5-րդ հոդվածում (Նախագիծ 1-ի առաջարկվող խմբագրության՝ 7-րդ հոդված) «Օրենսգիրքը» բառը փոխարինել «Օրենսգրքում» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագիծ 1-ի առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 6-րդ հոդված	Նախագիծ 1-ի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 6-րդ հոդվածում (Նախագիծ 1-ի առաջարկվող խմբագրության՝ 8-րդ հոդված) «Օրենսգիրքը» բառը փոխարինել «Օրենսգրքում» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	Կառավարություն	Նախագիծ 1-ի առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 8-րդ հոդված	Նախագիծ 1-ի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 8-րդ հոդվածը (Նախագիծ 1-ի առաջարկվող խմբագրության՝ 10-րդ հոդված) շարադրել հետևյալ խմբագրությամբ. «*Հոդված 10.* Օրենսգրքի 172-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. *«Հոդված 172. Վճռաբեկ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը եւ որոշման հրապարակումը* 1. Վճռաբեկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կայացման պահից, վերջնական է եւ բողոքարկման ենթակա չէ: 2. Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացրած որոշումը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:»:»:		
7.	Կառավարություն	«Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ 2) 1-ին հոդված	Նախագիծ 2-ի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248-Ն» բառերը, «օրենսգրքի» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը, իսկ «ընթացակարգ» բառը փոխարինել «ընթացակարգով սահմանված կարգի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	Նախագիծ 2-ի առաջարկվող խմբագրության 2-րդ հոդված	Նախագիծ 2-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ հոդված. «*Հոդված 2.* Օրենսգրքի 413-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ մաս. «4. Վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու դեպքում բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնել այն մինչև բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտի հրապարակման օրը:»:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	Կառավարություն	Նախագիծ 2-ի առաջարկվող խմբագրության 3-րդ հոդված	Նախագիծ 2-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ հոդված. «*Հոդված 3.* Օրենսգրքի 414.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Դատավարության մասնակիցն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			իրավունք ունի ներկայացնելու վճռաբեկ բողոքի պատասխան վճռաբեկ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը:»:»:		
10.	Կառավարություն	Նախագիծ 2-ի առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 2-րդ հոդված	Նախագիծ 2-ի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 2-րդ հոդվածում (Նախագիծ 2-ի առաջարկվող խմբագրության՝ 4-րդ հոդված) «Օրենսգիրքը» բառը փոխարինել «Օրենսգրքում» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	Կառավարություն	Նախագիծ 2-ի առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 5-րդ հոդված	Նախագիծ 2-ի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 5-րդ հոդվածում (Նախագիծ 2-ի առաջարկվող խմբագրության՝ 7-րդ հոդված) «Օրենսգիրքը» բառը փոխարինել «Օրենսգրքում» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
12.	Կառավարություն	Նախագիծ 2-ի առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 6-րդ հոդված	Նախագիծ 2-ի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 6-րդ հոդվածում (Նախագիծ 2-ի առաջարկվող խմբագրության՝ 8-րդ հոդված) օրենսգրքի փոփոխվող 423-րդ հոդվածի 1-ին մասում «կայքում» բառը փոխարինել «կայքի միջոցով» բառերով: Փոփոխվող 423-րդ հոդվածի 3-րդ մասում «414.1» թվերը փոխարինել «414^1» թվերով, իսկ «414.3» թվերը փոխարինել «414^3» թվերով:		
13.	Կառավարություն	Նախագծերի անցումային դրույթներում	Անցումային դրույթները շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաև մինչև սույն օրենքի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված վճռաբեկ բողոքների քննության վրա, որոնք քննվում են սույն օրենքով նախատեսված գրավոր ընթացակարգով, եթե վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում չի կայացվել»:		